



Նկ.1. Երևան քաղաքի 1989, 2000, 2010 և 2018 թթ. մակերևութային ծածկի քարտեզները ստացված Landsat արբանյակային լուսանկարներից ԲՇՊ մոդելի կիրառմամբ:



Նկ. 2. 1989-2018 թթ-երևան քաղաքի մակերևութային ծածկի առավել փոփոխությունների ենթարկված հատվածները:

(Դալմայի այգիներ, Երևանյան լճից դեպի Արարատյան դաշտ բնկած հատված, Սպայկայի ջերմոցների տարածքներ):

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ.

- Արբանյակային լուսանկարների մեքենայացված ուսուցման դասակարգիչներից ԲՇՊ մոդելն իր ցուցանիշներով գերազանցում է դասակարգման մյուս ալգորիթմները, իսկ ԱՎԴ մոդելը դրսևորում է կիրառման ճշտության աննշան ցածր տարբերություն ԲՇՊ մոդելի հետ համեմատյալ և տալիս է գրեթե նույն արդյունքները: Այդուհանդերձ, որոշ դեպքերում ԱՎԴ դասակարգման ալգորիթմը իր պարզությամբ կարող է երբեմն նախընտրելի լինել ԲՇՊ ալգորիթմից:
- Քաղաքային մակերևութային ծածկի փոփոխության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000-2010 և 2010-2018 ժամանակահատվածներում Երևան քաղաքի տարածքում գտնվող գյուղատնտեսական հողատարածքներ զգալիորեն կրճատվել են: Գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացում նկատվել է միայն 1989-2000 ժամանակահատվածում, որը կարող է բացատրվել երկրում առկա սոցիալ տնտեսական ճգնաժամով: 1989-2018թթ ժամանակահատվածներում նկատվում է քաղաքային կառուցապատման տարածական աճ՝ գլխավորապես կանաչ տարածքների հաշվին:
- Մակերևութի ծածկի «Քաղաքային կառուցապատում, Մերկ հող և Բաց տարածք» տիպերն ունեն նմանություններ և դրանով պայմանավորված դասակարգման բոլոր մոդելները “տուժում են” Landsat արբանյակային նկարների վրա դրանք տարբերակելիս:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-1E085 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գրականություն

- ՀՍՍՀ Ֆիզիկական Աշխարհագրություն. 1971. ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ., Երևան, 469էջ.
- Ang Kean Hua, Ping Owi Wei. 2018. The influence of land-use/land-cover changes on land surface temperature: a case study of Kuala Lumpur metropolitan city. *European Journal of Remote Sensing*, Vol. 51, Issue 1, 1049-1069, <https://doi.org/10.1080/22797254.2018.1542976>.
- Choudhury D., Das K., Das A. 2019. Assessment of land use land cover changes and its impact on variations of land surface temperature in Asansol-Durgapur Development Region. *The Egyptian Journal of Remote Sensing and Space Science*, vol, 22, issue 2, p.203-218, <https://doi.org/10.1016/j.ejrs.2018.05.004>
- Dhar R.B., Chakraborty S., Chattopadhyay R. et al. 2019. Impact of Land-Use/Land-Cover Change on Land Surface Temperature Using Satellite Data: A Case Study of Rajarhat Block,

- North 24-Parganas District, West Bengal. *J Indian Soc Remote Sens* 47, p.331–348. <https://doi.org/10.1007/s12524-019-00939-1>
- Foody G.M.** 1992. On the compensation for chance agreement in image classification accuracy assessment. *Photogrammetric Engineering and Remote Sensing*, 58, p.1459-1460
- Hussam Al-Bilbisi.** 2019. Spatial Monitoring of Urban Expansion Using Satellite Remote Sensing Images: A Case Study of Amman City, Jordan, *Sustainability* 11(8):2260, DOI:10.3390/su11082260
- Jozdani Shahab Eddin, Johnson Brian Alan and Chen Dongmei.** 2019. Comparing Deep Neural Networks, Ensemble Classifiers, and Support Vector Machine Algorithms for Object-Based Urban Land Use/Land Cover Classification. *Remote Sens.* 11, 1713; doi:10.3390/rs11141713
- Ma Zhenkui, Redmond Roland L.** 1995. Tau coefficients for accuracy assessment of classification of remote sensing data. *Geography*, DOI:10.1007/s12601-015-0032-2
- Maxwell A., Warner A., Fang F.** 2018. Implementation of machine learning classification in remote sensing an applied review. *International Journal of Remote Sensing*, Vol. 39, Issue 9, p.2784–2817, <https://doi.org/10.1080/01431161.2018.1433343>
- Monserud R.A., Leemans R.** 1992. Comparing global vegetation maps with the Kappa statistic Ecological Modelling. vol. 62, issue 4, 275-293, [https://doi.org/10.1016/0304-3800\(92\)90003-W](https://doi.org/10.1016/0304-3800(92)90003-W)
- Pal S., Ziaul Sk.** 2017. Detection of land use and land cover change and land surface temperature in English Bazar urban centre. *The Egyptian Journal of Remote Sensing and Space Science*, Vol. 20, Issue 1, 125-145, <https://doi.org/10.1016/j.ejrs.2016.11.003>.
- Pedregosa, F., Varoquaux, G., Gramfort, A., Michel, V., Thirion, B., Grisel, O., Blondel, M., Prettenhofer, P., Weiss, R., Dubourg, V.** 2011. Scikit-learn: Machine Learning in Python. *J. Mach. Learn. Res.*, 12, p.2825–2830.
- Python Machine Learning** 2016. Packt Publishing, 425p.
- Rousta I., Sarif M.O., Gupta R.D., Olafsson H., Ranagalage M., Murayama Y., Zhang H., and Mushore T.D.** 2018. Spatiotemporal Analysis of Land Use/Land Cover and Its Effects on Surface Urban Heat Island Using Landsat Data: A Case Study of Metropolitan City Tehran (1988–2018). *Sustainability*, 10(12), 4433; <https://doi.org/10.3390/su10124433>
- Yerevan Green city action plan** 2017. 203p., <https://www.yerevan.am/en/yerevan-green-city-action-plan/>

ИССЛЕДОВАНИЕ ПРОСТРАНСТВЕННО-ВРЕМЕННОГО ИЗМЕНЕНИЯ ЗЕМЕЛЬНОГО ПОКРОВА ГОРОДА ЕРЕВАНА С ПРИМЕНЕНИЕМ ДАННЫХ СПУТНИКОВОГО ДИСТАНЦИОННОГО ЗОНДИРОВАНИЯ

Тепаносян Г., Овсепян А., Мурадян В., Асмарян Ш.

Резюме

В статье рассматриваются особенности пространственно-временного изменения земельного покрова города Еревана в период 1989-2018 гг., дешифрованные со спутниковых снимков Landsat - с использованием алгоритмов машинного обучения. Для картографирования земельного покрова города были выбраны наиболее широко используемые алгоритмы машинного обучения: методы многослойного перцептрона МСП, (MLP-multilayerperceptron), опорных векторов-МОВ (SVC-supportvectorelassifier) и случайный лес-СЛ (RF-randomforest). Результаты исследования показали, что из классификаторов машинного обучения спутниковых снимков, результаты, полученные методом МСП превосходят результаты других

алгоритмов классификации. Пространственно-временной анализ карт земельного покрова города показывает, что сельскохозяйственные угодья в Ереване были значительно сокращены в течение периода исследования, а пространственный рост городских застроенных территорий в значительной степени произошёл за счёт зон зелёных насаждений.

STUDY OF SPATIO-TEMPORAL CHANGES IN YEREVAN'S LAND COVER USING SATELLITE REMOTE SENSING DATA

Tepanosyan G., Hovsepyan A., Muradyan V., Asmaryan Sh.

Abstract

The article considers specificities of a spatio-temporal change in Yerevan's land cover between 1989 and 2018, classified from Landsat satellite images using machine learning algorithms. To map the city land cover, this research chose the most widely used machine learning algorithms: MLP-multilayer perceptron, SVC- support vector classifier and RF- random forest methods. As established, the results obtained by MLP method outperformed those obtained using other satellite imagery machine learning classifiers. A spatio-temporal analysis of the city land cover maps has indicated that agricultural areas in Yerevan were significantly reduced during the period of the analysis and the spatial growth of urban built-up areas occurred mostly at the expense of green zones.

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

**ԷԴՈՒԱՐԴ ԱԲԵԼԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
(ծննդյան 100-ամյակին)***



2020թ. հունիսի 2-ին լրացավ երկրաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Աբելի Խաչատուրյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծնվել է Թբիլիսիում, 1937թ. ուսանել է Երևանի պետական համալսարանի երկրաբանա-աշխարհագրական ֆակուլտետում, ապա շարունակել ուսումը Թբիլիսիի պետական համալսարանում, որն ավարտել է 1941թ. նոյեմբերին:

1943թ.-ից մինչև իր վախճանը (1982 թ.) Է.Ա.Խաչատուրյանի գիտական գործունեությունը կապված էր Հայաստանի գիտությունների Ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) հետ, որտեղ նա անցավ կրտսեր գիտական աշխատողի, ինստիտուտի գիտ. քարտուղարի, ավագ գիտական աշխատողի, Օգտակար հանածոների բաժնի վարիչի ուղին:

Է.Ա.Խաչատուրյանի գիտական գործունեության սկիզբը կապված էր Հայաստանի երկաթի հանքավայրերի ուսումնասիրության հետ, որի արդյունքները հիմք հանդիսացան նրա թեկնածուականատենախոսության (1950թ.), ապա “Генетические типы железорудных месторождений Армянской ССР и перспективы их освоения” (1953թ.) մենագրության համար, մենագրություն, որն առաջինն էր Հայաստանի երկաթի հանքավայրերի մասին:

1955թ.-ից սկիզբ է առնում Է.Ա.Խաչատուրյանի գիտական գործունեության նոր կարևոր փուլ, որը շարունակվեց մինչև նրա կյանքի վերջի տարիները և վերաբերում էր հրաքարային ֆորմացիայի հանքավայրերի երկրաբանությանը, միներալաբանությանը, երկրաքիմիային:

Առաջին անգամ նրա կողմից որոշվեցին և նկարագրվեցին մի շարք հազվագյուտ միներալներ, այդ թվում սուլֆիդներ, սուլֆատներ, տելու-

* Հիմք է հանդիսացել Զ.Ա.Хачатурян (к 60-летию со дня рождения) “Изв. АН АрмССР, Науки о Земле”, 1980, N 3, с. 82-86, հոդվածը:

րիդներ, նշվեցին պղինձ-հրաքարային, հրաքարա-բազմամետաղային հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները: Այդ հետազոտությունները ամփոփվեցին նրա դոկտորական ատենախոսությունում (1969թ.), որը 1977թ. լույս տեսավ “Минералогия, геохимия и генезис руд колчеданной формации Армянской ССР” մենագրության տեսքով: Հարկ է նշել Է.Ա.Խաչատուրյանի աշխատանքների կարևոր առանձնահատկությունը՝ նրանք, ինչպես օրենք, ավարտվում էին հետագա որոնողա-հետախուզական աշխատանքների հանձնարարականներով:

1957թ.-ից ղեկավարելով ԵԳԻ Օգտակար հանածոների բաժինը նա մեծ ուշադրություն էր դարձնում երիտասարդ գիտական կադրերի պատրաստմանը, որոնց շնորհիվ հետագայում կատարվեցին բազմակողմանի ուսումնասիրություններ հրաքարային օգտակար հանածոների առաջացման տարբեր ասպեկտների վերաբերյալ: 1970-ական թվականներին Կապանի հանքային շրջանում Է.Ա.Խաչատուրյանի ղեկավարությամբ կատարված համապարփակ հետազոտությունների արդյունքում պարզաբանվեցին մագմատիկ և մետասոմատիկ առաջացումների առանձնահատկությունները, հանքայնացման նյութական կազմը, տեղաբաշխման երկրաբանա-կառուցվածքային առանձնահատկությունները, կազմվեց նոր երկրաբանական քարտեզ, արտադրական կազմակերպություններին առաջարկվեցին կոնկրետ հեռանկարային տեղամասեր որոնողա-հետախուզական աշխատանքների իրականացման համար:

Է.Ա.Խաչատուրյանը ջանում էր ավելի սերտ համագործակցություն իրականացնել ՀՍՍՀ Երկրաբանական վարչության հետ, անմիջականորեն արձագանքել արտադրական կազմակերպություններին հուզող հարցերին:

Ղեկավարելով բաժնի երիտասարդ գիտաշխատողների կոլեկտիվը՝ նա մեծ ուշադրությամբ էր վերաբերվում նրանց առաջարկություններին և մտահաղացումներին, համատեղ քննարկումներ էր կազմակերպում վիճելի հարցերի մասին՝ նպատակ ունենալով հանգել ընդունելի տարբերակի:

Է.Ա.Խաչատուրյանը մի շարք տարիներ դասավանդել է «Միներալոգիա» և «Օգտակար հանածոների արդյունաբերական տիպերի հանքավայրեր» առարկաները Երևանի պետական համալսարանում և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1971թ. նրան շնորհվեց պրոֆեսորի կոչում:

Է.Ա.Խաչատուրյանը համահեղինակ էր ակադ. Հ.Գ.Մադաթյանի ղեկավարությամբ կազմված “Прогнозно-металлогеническая карта Армянской ССР” քարտեզի: Նա ակտիվ մասնակից էր Հայաստանի և Բուլղարիայի հանքային ֆորմացիաների համեմատական ուսումնասիրությունների աշխատանքներին: Է.Ա.Խաչատուրյանը շուրջ 90 գիտական աշխատանքների հեղինակ և համահեղինակ էր, այդ թվում “Рассеянные металлы в рудах Армянской ССР” (1966г.), “Металлические

полезные ископаемые” (1967г.), “Алавердский рудный район” (1968г.): Նա հեղինակ էր հայերեն լեզվով տպագրված ՀՍՍՀ օգտակար հանածոներին նվիրված գիտա-հանրամատչելի գրքի:

Է.Ա.Խաչատուրյանը իրեն բնորոշ պատասխանատվությամբ և ջանասիրությամբ կատարում էր բազմաթիվ և տարաբնույթ հասարակական աշխատանքներ: 1971-1975թթ. նա «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր Գիտություններ Երկրի մասին» հանդեսի պատասխանատու խմբագիրն էր, ՀՍՍՀ Պետական մրցանակների շնորհման գիտության ոլորտի երկրաբանա-լեռնային սեկցիայի, Բնության պաշտպանության հանրապետական խորհրդի, Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտ.խորհրդի, Երևանի պետական համալսարանի գիտական աստիճաններ շնորհման մասնագիտացված գիտ.խորհրդի, ՀՍՍՀ Երկրաբանական վարչության օգտակար հանածոների հաշվարկման մշտական հանձնաժողովի և մի շարք այլ հանձնաժողովների անդամ էր:

Է.Ա.Խաչատուրյանը մասնակից էր բազմաթիվ միջազգային, համամիութենական, հանրապետական գիտաժողովների պատշաճ ներկայացնելով Հայաստանի երկրաբանության նվաճումները: 1969թ. նա րնտրվեց Օգտակար հանածոների զենեգիսի միջազգային ասոցիացիայի (IAGOD) անդամ: Նկատի ունենալով Է.Ա.Խաչատուրյանի բազմամյա գիտական նվաճումները՝ նա պարգևատրվեց “За трудовую доблесть” մեդալով և ՀՍՍՀ ԳԱ Նախագահության «Վաստակագիր»-ով: Է.Ա.Խաչատուրյանը հետաքրքիր մտահաղացումներ ուներ հետագա համատեղ հետազոտությունների վերաբերյալ Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բուլղարիայի գիտնականների հետ, որոնք վերաբերվում էին հրաքարային և հրաքարա-բազմամետաղային հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման հարցերի տարբեր ասպեկտներին, սակայն 1982թ. ապրիլին նա հանկարծամահ եղավ 62 տարեկան հասակում:

Է.Ա.Խաչատուրյանի մասին այս հակիրճ ակնարկի հիմնական նպատակն էր ծանոթացնել ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներին ԵԳԻ երախատավորներից մեկի՝ Է.Ա.Խաչատուրյանի բազմակողմանի գործունեության հետ, որը իր կյանքը անվերապահորեն նվիրաբերեց երկրաբանական գիտությանը:

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ
Ռ.Մելքոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆՆԵՐԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(Հաղթանակի 75-ամյակին)**

Գրիգորյան Գ.Ռ., Պողոսյան Ն.Յ., Դավթյան Ռ.Ս.

*ՀՀ ԳԱԱ ԵԳԻ, Երևան, Բաղրամյան 24,
E-mail: gayane347@gmail.com
Հանձնված է խմբագրություն*

Հոդվածում անդրադարձ է կատարվել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) գիտնականների և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) դասախոսների մարտական ծառայություններին Հայրենական մեծ պատերազմի տարիներին և նրանց հայրենանվեր զործունեությանը թիկունքում: Տվյալները հավաքագրվել են արխիվներից, անձնական զործերից, հարազատներից:

Հանգուցային բառեր. Հայ երկրաբաններ, Հայրենական մեծ պատերազմ, ռազմաճակատ, ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան, պատերազմից հետո:

ԱՐԴԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԻՍԱՀԱԿԻ (1914-1999): Ծնվել է 1914թ. օգոստոսի 23-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում:

1936թ., ընդունվել է ԵՊՀ աշխարհա-երկրաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1941թ.: Երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, Հ. Ադամյանը որպես կադրային ծառայություն անցած զինվոր, անմիջապես ուղարկվել է ռազմաճակատ: 1942-1943թթ. մարտնչել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում ու 409-րդ դիվիզիայի կազմում մասնակցել է Մոզդոկի և մյուս քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: Պարգևատրվել է մի շարք մեդալներով: 1945թ. Հ.Ադամյանը զորացրվել է և ընդունվել (ԵԳԻ) ասպիրանտուրան: 1949թ. Հ. Ադամյանը պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը, որից հետո նշանակվել է ինստիտուտի գիտական քարտուղար: 1950-1951թթ. աշխատել է «Հայածուխ» արշավախմբում որպես գլխավոր երկրաբան:

1954-1956թթ. դասախոսական աշխատանքին զուգահեռ եղել է ԵՊՀ կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար, 1963-1967թթ. Գիտահետազոտական բաժնի ղեկավար, 1967-1979թթ. Երեկոյան և հեռակա ուսուցման զծով պրոռեկտոր:

1972թ. Հ. Ադամյանին շնորհվել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը: Կյանքի վերջին տարիներին աշխատել է ԵՊՀ պատմության թանգարանում որպես ավագ գիտաշխատող:

Վախճանվել է 1999 թ. ապրիլի 5-ին Երևանում:

ԱՄԻՐՅԱՆ ՇԱՎԱՐՇ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1926-2018): Ծնվել է 1926թ. ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Կարբի գյուղում: 1944թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և աշխատանքի նշանակվել Օհանավան գյուղի դպրոցում, որպես ուսուցիչ: Նույն տարում զորակոչվել է Սովետական բանակ և ծառայել մինչև 1950թ.:

1950թ. Շ.Ամիրյանն ընդունվել է ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 1956թ. և աշխատանքի անցել ԵԳԻ-ում: 1976-2005թթ. հաջորդաբար զբաղեցրել է տեխնիկ-երկրաբանի, կրտսեր, ավագ գիտաշխատողի, Թումանյանի գ/հ բազայի վարիչի, 1986-2005թթ. Օգտակար հանածոների լաբորատորիայի վարիչի, առաջատար գիտ.աշխատողի պաշտոնները:

1962թ. Շ.Հ. Ամիրյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1974թ. դոկտորական ատենախոսությունը:

1976-1977թթ. ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում դասավանդել է «Միներալոգիա» առարկան:

Ակադեմիկոս Հ.Մադաթյանի ղեկավարությամբ կազմված և հրատարակված «Հազվագյուտ և ազնիվ տարրերը ՀԽՍՀ հանքային ֆորմացիաներում» մենագրության համար Շ.Հ. Ամիրյանը համահեղինակների հետ արժանացել է Հայաստանի Պետական մրցանակի:

Նա ընտրվել է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, հանքավայրերի ծագումնաբանության Միջազգային ասոցիացիայի (IAGOD) անդամ էր: 1985թ. արժանացել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչման, 2015թ. պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

Բանակում բարեխիղճ ծառայության համար Շ.Հ. Ամիրյանը պարգևատրվել է մարտական և հոբելյանական մեդալներով:

Վախճանվել է 2018թ. մայիսի 1-ին Երևանում:

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ (1919-1989): Ծնվել է 1919թ. փետրվարի 7-ին Քարվանսարայում (Իջևան): 1936թ. ընդունվել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո 1941թ. զորակոչվել է Կարմիր բանակ և ուղարկվել Մուրոմում գտնվող ռադիոկայանի ռազմական դպրոց: Ուսումն ավարտելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում և մեկնել Արևմտյան ռազմաճակատ: 102-րդ և 275-րդ հրաձգային դիվիզիաների կազմում մասնակցել է Դոնբասի, Վորոշիլովգրադի, Դոնի Ռոստովի մարտերին: 1942թ. նշանակվել է այդ դիվիզիայի դասակի հրամանատար: Հյուսիսկովկասյան ռազմաճակատում մասնակցել է Պյատիգորսկի, Կիսլովոդսկի, Նալչիկի և Օրջոնիկիձեի մարտերին: 1942թ. հունիսի 24-ին Դոնի Ռոստովի հա-

մար մղվող մարտերում վիրավորվել է, ստացել կոնտուզիա: Վերականգնվելով նորից մեկնել է ռազմաճակատ, սակայն 1942թ. աշնանը կրկին վիրավորվել է: 1943թ. բուժվելուց հետո ճանաչվել է հաշմանդամ և զորացրվել է:

1945-1954թթ. Ա.Տ.Ասլանյանը հաջորդաբար եղել է ԵԳԻ ասպիրանտ, գիտաշխատող, ապա իր նախաձեռնությամբ կազմակերպված Ռեզիդնայ երկրաբանության սեկտորի վարիչ:

1947թին պաշտպանել է թեկնածուական, 1957թ. դոկտորական ատենախոսությունը:

1954-1961թթ. նշանակվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից երկրաբանական վարչության գլխ. ինժեներ, ապա պետ: 1961-1965թթ. 1965-1966թթ.-ին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, 1966-1975թթ. ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր: 1975-1987թթ. ԵԳԻ տնօրեն: Ա. Ասլանյանը 1950-ից դասախոսել է ԵՊՀ և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1968 թվականից հանդիցացել է «Հայկական երկրաբանական ընկերության» նախագահ, 1970թ.-ից երկու անընդմեջ ժամկետ ընտրվել է Մոլորակագետների միջազգային ասոցիացիայի փոխարեզիդենտ: 1965թ. ընտրվել է ՀԳԱ թղթակից անդամ, 1986թ. ակադեմիկոս:

Պարգևատրվել է «Հայրենական Մեծ պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, Աշխատանքային Կարմիր դրոշի 3 շքանշաններով, Ժողովուրդների բարեկամության շքանշանով, Գերմանիայի երկրաբանական միության Աբրահամ Վերների մեդալով, ԽՍՀՄ երկրաբանական միության Մեմյոնով-Տյանշանսկու մեդալով:

Վախճանվել է 1989թ. մարտի 16-ին, Երևանում:

ԱՎԱԳՑԱՆ ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍԻ (1914-1999):

Ծնվել է 1914թ. սեպտեմբերի 9-ին, Իզդիբում (Թուրքիա):

1939թ. ավարտելով ԵՊՀ աշխարհա-երկրաբանական ֆակուլտետը ընդունվել է ԵԳԻ, որպես գիտաշխատող: 1942-1943թթ. զորակոչվել է Կարմիր բանակ և շարքային մարտիկի կարգավիճակով մասնակցել Կովկասի պաշտպանությանը: Պատերազմի ավարտից հետո վերադարձել է ԵԳԻ: 1948թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1956-76թթ. հանդիսացել է ԵԳԻ Հ.Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի վարիչ:

Արժանացել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչմանը: Պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն Սովետի, Հայաստանի ԳԱ նախագահության, «Գիտելիք» ընկերության բազմաթիվ պատվոգրերով:

Վախճանվել է 1999թ. հուլիսի 21-ին Երևանում:

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԻՎԱՆԻ (1911-1985): Ծնվել է 1911թ. Աշխաբաթ քաղաքում, Թուրքեստանի ռազմական օկրուգի ծառայողի ընտանիքում: Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին ընտանիքը տեղափոխվում է Ստավրոպոլի մարզի Եդիսիյա գյուղը:

Ավարտել է Դոնի (Նովոչերկասկի) Պոլիտեխնիկական ինստիտուտը, ստացել լեռնային ինժեներ-երկրաբանի որակավորում: 1930թ. տեղափոխվել է Հայաստան և 1934 թվականից աշխատել Հայաստանի երկրաբանության ոլորտում:

1941թ. 390-րդ Հայկական դիվիզիայի կազմում մեկնել է ռազմաճակատ: Ս.Ավանեսյանը ռազմաճակատից այլ ինժեներների հետ միասին արձագանքելով կառավարության կոչին՝ աշխատանքի է անցել Հայաստանի Կոմկուսի կենտկոմի պղնձահանքային բաժանմունքում:

Ս.Ավանեսյանը պարգևատրվել «Չեխոսլովակիայի հանրապետության աշխատանքային» մեդալով: 1967թ-ին նրան շնորհվել է «ՀՍՄՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը:

Վախճանվել է 1985թ. Երևանում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱԲԳԱՐԻ (1918-2007): Ծնվել է 1919թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1936թ ընդունվել է ԵՊՀ աշխարհա-երկրաբանական ֆակուլտետը: 1941թ. ավարտել է համալսարանը և զորակոչվել Կարմիր բանակ: 1942թ. ավարտել է Գորկու ռազմա-տանկային դպրոցը և տանկային դասակի հրամանատարի պաշտոնով ուղարկվել Վորոնեժի ռազմաճակատ: 1943թ. նրան տեղափոխել են ուկրաինական ռազմաճակատ, ուր մասնակցել է Բելգորոդ, Խարկով, Պոլտավա քաղաքների ազատագրման համար մղվող մարտերին: Նույն թվականի հուլիսին Վ. Ավետիսյանը վիրավորվել է, ապաքինվել և 1944թ. մայիսին նորից մեկնել Երկրորդ ուկրաինական ռազմա-ճակատ:

Պատերազմից հետո Վ. Ավետիսյանը զորացրվել է, 1954թ. պաշտ-պանել է թեկնածուական ատենախոսությունը, ստացել դոցենտի կոչում և նույն թվականից աշխատանքի անցել ԵՊՀ-ում որպես երկրաբանական ֆակուլտետի Ընդհանուր և կիրառական երկրա-բանության ամբիոնի դոցենտ, 1968-1976թթ. ղեկավարել է նույն ամ-բիոնը: 2000թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: 1970թ. Վ. Ավետիս-յանին շնորհվել է «ՀՍՄՀ վաստակավոր երկրաբան» կոչումը:

Վ.Ավետիսյանը պարգևատրվել է «Հայրենական Մեծ պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ աս-տիճանի», շքանշաններով բազմաթիվ մարտական մեդալներով:

Վախճանվել է 2007թ. հոկտեմբերի 12-ին Երևանում:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄԻՍՈՆ ԿԱՐԱՊԵՏԻ (1924-1990): Ծնվել է 1924թ. Միսիանի շրջանի Շաղաթ գյուղում: 1941թ. ընդունվել ԵՊՀ աշխարհա-երկրաբանական ֆակուլտետը, ավարտել է առաջին կուրսը և 1942թ. օգոստոսին զորակոչվել Կարմիր բանակ: Մեկ ամիս անց նրան ուղարկել են Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, ուր ծառայել է 69-րդ առափնյա ծովային բրիգադում որպես հրաձիգ: Մասնակցել է Նովոռոսիյսկի շրջանում տեղի ունեցած դեսանտային գործողություն-ներին և կատաղի մարտերից մեկում 1943թ. հունվարի 11-ին ծանր վիրավորվել: 898-րդ առանձին կապի գումարտակում որպես կապա-վոր մասնակցել է Խարկովի, Դնեպրոպետրովսկի, Ժիտոմիրի, Ռով-նոյի, Կելցի ազատագրմանը և թշնամու Սանդոմիրի հենակետերի վե-րացմանը: 1944թ. հուլիսին Սանդոմիրի մոտ վիրավորվել է և առանց մարտական շարքից դուրս գալու բուժվել: Մասնակցել է գերմանական մի քանի քաղաքների, այդ թվում՝ Բեռլինի գրավմանը: Ս. Արզուման-յանը պարգևատրվել է մի շարք մարտական մեդալներով ու Գերա-զույն Գլխավոր հրամանատարության շնորհակալագրերով: 1945թ. Ս.Արզումանյանը զորացրվել է և շարունակել ուսումը, ավարտելով այն 1949թ.: 1962թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությու-նը: 1966-1990թթ. դասախոսել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում: 1986թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1989թ. ար-ժանացել է պրոֆեսորի կոչման:

Վախճանվել է 1990 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում:

ԲԱՆՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՊՈՂՈՍԻ (1917-2002): Ծնվել է 1917թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ աշխարհա-երկրաբանական ֆակուլտետը: 1940թ. ավարտել է այն, զորակոչվել բանակ: 1941թ. ավարտել է Բաքվի զենիթային հրետանու դպրոցը, ստացել լեյտենանտի կոչում և նշա-նակվել դասակի հրամանատար Հայկական 89-րդ դիվիզիայում: Այնու-հետև ծառայել է 20-րդ հատուկ զենիթային դիվիզիայում որպես մարտկոցի հրամանատար: Ս.Բալյանը մարտնչել է Առաջին բելա-ռուսական, Առաջին և Երրորդ ուկրաինական ռազմաճակատներում: Վիլնյուսի ազատագրման ժամանակ վիրավորվել է, ապաքինվել և վերադարձել ռազմաճակատ: Նա մասնակցել է Քյոնիգսբերգի (այժմ Կալինինգրադ) և Բեռլինի գրավմանը: Կարմիր բանակի շարքերում նա անցել է Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին:

1946թ. Ս. Բալյանը զորացրվել է և վերադարձել ԵՊՀ: Նույն թվա-կանին աշխատանքի է անցել ԵԳԻ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտ-աշխատող: 1951թ. տեղափոխվել է ԵՊՀ, անցնելով դասախոսական աշխատանքի: 1949թ. Ս.Բալյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1966թ. դոկտորական ատենախոսությունները: 1951-2002թթ. աշխատել է ԵՊՀ աշխարհագրական ֆակուլտետում, սկզբում իբրև ավագ դա-սախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1968 թվականից պրոֆեսոր: 1969-1997թթ. հանդիսացել է ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի

հիմնադիր վարիչը: 1970թ. Մ.Բալյանն արժանացել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» կոչմանը:

Մարտական սխրագործությունների համար արժանացել է «Ալեքսանդր Նևսկու», «Կարմիր աստղի», «Հայրենական Մեծ պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանների և բազմաթիվ մեդալների:

Վախճանվել է 2002թ. մայիսի 15-ին:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ (1908-1998): Ծնվել է 1908թ. մայիսի 10-ին Երևանում: 1927-1931թթ. ԵՊՀ բնագիտության ֆակուլտետի քիմական բաժնի ուսանող:

1938թ. ընդունվել է ԵԳԻ ասպիրանտուրան: 1942թ. զորակոչվել է Կարմիր բանակ: 1942թ. փետրվարից մասնակցել է Ղրիմի և Հյուսիս-կովկասյան ռազմաճակատներում, Կերչի մարտերին նախ որպես 47-րդ բանակի 158-րդ առանձին մոտահրաձգային գումարտակի դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: 1943թ-ին առողջության վատթարացման պատճառով զորացրվել է և անցել աշխատանքի ԵԳԻ-ում: 1944-1947թթ. հանդիսացել է ԵԳԻ-ի գիտքարտուղար: 1951թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1948-1977թթ. ԵԳԻ-ի Պետրոգրաֆիայի և միներալոգիայի սեկտորի, 1976-1986թթ. Երկրաժամանակագրության և իզոտոպային հետազոտությունների լաբորատորիայի վարիչ:

1963թ-ին պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր դրոշի», 1985թ. «Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշաններով, 1966թ. և 1985թ. ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: 1974թ-ին Գ.Բաղդասարյանին շնորհվել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը:

Վախճանվել է 1998 թ. հունվարի 16-ին Երևանում:

ԲՈՇՆԱՂՅԱՆ ՊԵՐՃ ՍԵՐԳԵՅԻ (1920-2004): Ծնվել է 1920թ. Նոր Բայազետ (Գավառ) քաղաքում: 1938թ. Երևանում ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ-ի աշխարհագրա-երկրաբանական ֆակուլտետը: 1941թ. հուլիսին Պ.Բոշնաղյանը զորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայում: Մարտնչել է Հյուսիսային Կովկասի, Անդրկովկասի, Առաջին բելառուսական ռազմաճակատներում և Մերձծովյան հատուկ բանակի կազմում: Պ.Բոշնաղյանը նշանակվել է ականանետային գումարտակի հրամանատար, հետախուզության ու օպերատիվ ծառայության զծով գնդի շտաբի պետի օգնական, գնդի շտաբի պետ: Պ.Բոշնաղյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Գրոզնի քաղաքի պաշտպանության, Թաման թերակղզու, Կերչի, Սևաստոպոլի ազատագրման, Ֆրանկֆուրտի և Բեռլինի զրավման համար մղվող մարտերին:

Պատերազմից հետո, 1948թ. աշխատել է ԵԳԻ-ում, 1950թ-ից ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետի Ընդհանուր և կիրառական երկրաբա-

նության ամբիոնում: 1955թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 1956թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1952-1955թթ. և 1961-1962թթ. Պ. Բոշնադյանը եղել է ԵՊՀ տնտեսական աշխատանքների զծով պրոռեկտոր, 1959-1961թթ. երկրաբանական ֆակուլտետի դեկան, 1965-1968թթ. դեկանի տեղակալ, 1966-1968 թթ. և 1992-1997թթ. Ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնի վարիչ: 1997թ. արժանացել է պրոֆեսորի կոչման:

1999-2003 թթ. Պ. Բոշնադյանն ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր, երկար տարիներ ղեկավարել է ՀՀ պատերազմի վետերանների կոմիտեն: 1996 թվականից մինչև կյանքի ավարտը եղել է ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների միության խորհրդի նախագահը, ԱՊՀ անդամ երկրների վետերանների հասարակական կազմակերպությունների միջազգային միությունը համադասող խորհրդի նախագահության անդամ:

1971թ. Պ.Բոշնադյանն արժանացել է «ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան» կոչման: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի», «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղ», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով: Ֆրանսիայի իշխանությունների կողմից նրան շնորհվել է «Փարիզ քաղաք» անվանական մեդալ:

Վախճանվել է 2004թ. հունվարի 5-ին Երևանում:

ԳՅՈՎԶՄԱՅՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԳՐԻԳՈՐԻ (1920-1988): Ծնվել է 1920 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի): 1939թ. ավարտել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը և աշխատանքի անցել սկզբում Մոնչեգորսկում, ապա՝ Մուրմանսկում: Երկրաբանական հետախուզական աշխատանքների ժամանակ հիվանդացել է, փոխադրվել Երևան և առողջանալուց հետո 1941թին զորակոչվել բանակ:

Ծառայել է 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայում որպես դասակի հրամանատար: 1941թ. դիվիզիայի կազմում մեկնել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ, մասնակցել է Մոզդոկի տակ տեղի ունեցող կատաղի մարտերին:

Պատերազմից հետո, 1945-1950թթ. սովորել ու ավարտել է Մոսկվայի Մ.Կալինինի անվան գունավոր մետաղների ինստիտուտը, ապա սովորել է Լենինգրադի (Մանկտ-Պետերբուրգ) լեռնային ինստիտուտում, 1950թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը և տեղափոխվել ԵՊՀ, որտեղ աշխատել է երկրաբանական ֆակուլտետում որպես դոցենտ:

Վախճանվել է 1988թ. Երևանում:

ՄԱՂԱՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ (1914-1982): Ծնվել է 1914թ.-ի ապրիլի 6-ին Թբիլիսիում: 1935թ. ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) լեռնային ինստիտուտը: 1934-1940թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Տաջիկ-Պամիրյան արշավախմբում որպես ջոկատի պետ: 1940թ. գորակոչվել է բանակ: Հայրենական պատերազմի սկզբից նշանակվել է սակրավորային ականաճեղքային դասակի հրամանատար և մասնակցել Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի պաշտպանողական ծանր մարտերին: Արևմտյան Բուգ գետի վրա գտնվող կամուրջի շրջանում իրականացված հմուտ գործողությունների շնորհիվ հակառակորդին զգալի կորուստներ հասցնելու համար Հ.Մաղաքյանը 1941թ. արժանացել է լեյտենանտի կոչման և պարգևատրվել «Կարմիր աստղ» շքանշանով:

Այնուհետև ծանր վիրավորվել է և որոշ ժամանակ չանցած դուրս գրվել ու վերադարձել իր դիրքեր: Այդ ժամանակ սկսվել է դեպի Ստալինգրադ գերմանական զրոհը: 1942 թվականի աշնանը գորացրվել է և անցել աշխատանքի ԵԳԻ-ում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1947 թվականից տնօրենի գիտական գծով տեղակալ: 1957թ. Հ.Մաղաքյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախ տեխնիկական գիտությունների, իսկ 1963 թվականից երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: 1963-1966թթ. համատեղության կարգով եղել է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենը: Նա եղել է ԽՍՀՄ (1950) և ՀԽՍՀ (1976) պետական մրցանակների դափնեկիր: Պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր դրոշի», «Կարմիր աստղ», «Պատվոնշան» շքանշաններով:

Վախճանվել է 1982 թ. նոյեմբերի 14-ին Երևանում:

ՓԻՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1919-1998): Ծնվել է 1919թ. սեպտեմբերի 1-ին Թբիլիսիում: 1937թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: 1941թ. օգոստոսին գորակոչվել է Կարմիր բանակ, 1942թ. ավարտել է Թելավիյի հետևակային ուսումնարանը ստանալով լեյտենանտի կոչում: Մասնակցել է Կովկասի պաշտպանության մարտերին, դեսանտային գործողություններում Նովորոսիյսկի շրջանում, Կուրսկ-Բելգորոդ աղեղի, Ուկրաինայի ազատագրման, Դնեպրի գետանցման մարտերին որպես ականանետային վաշտի հրամանատար:

1946թ. հունիսին գորացրվել է բանակից և նույն տարվա հոկտեմբերին ավարտել է ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը: 1947-1988թթ. աշխատել է Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հաջորդաբար զբաղեցնելով կրտսեր գիտաշխատողի, Երկրաբանական թանգարանի վարիչի, ավագ գիտաշխատողի, երկրաքիմիայի բաժնի վարիչի պաշտոնները:

1951թ. Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է թեկնածուական, իսկ 1969թ. դոկտորական ատենախոսությունը: 1976թ. համահեղինակների հետ «Հազվագյուտ և ազնիվ տարրերը ՀԽՍՀ

հանքային ֆորմացիաներում» մենագրության համար Գ.Հ.Փիջյանն արժանացել է Հայաստանի Պետական մրցանակի գիտության բնագավառում:

1985թ. նրան շնորհվել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչումը:

Մարտական սխրանքների համար Գ.Հ.Փիջյանը պարգևատրվել է Կարմիր աստղ երկու շքանշանով (1943թ. մայիս և սեպտեմբեր ամիսներին), ՀՍՍՀ ԳԱ «Գովեստագիր» և «Վաստակագիր» պատվոգրերով, բազմաթիվ մարտական և աշխատանքային մեդալներով:

1988թ. իր դատեր հրավերով տեղափոխվել է Հայաստանից մշտական բնակության Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն:

Վախճանվել է 1998թ. Գերմանիայում:

ՇԻՐԻՆՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ: Ծնվել է 1923թ. հունվարի 25-ին Ղարաքիլիսայում (Վանաձոր): 1940թ. ընդունվել է ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետ, 1941թ. հոկտեմբերին գորակոչվել է Կարմիր բանակ: 1942թ. ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) հետևակի ուսումնարանը ստանալով լեյտենանտի կոչում: 1946թ. գորացրվել և շարունակել է ուսուցումը ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետում (1946-1950թթ.), ապա անցնելով աշխատանքի ԵԳԻ-ում: 1954թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և հաջորդաբար զբաղեցրել է կրտսեր գիտաշխատողի, ԵԳԻ գիտքարտուղարի (1955-1957թթ.), ավագ գիտ.աշխատողի (1957-1963թթ.), բաժնի վարիչի (1963-1965թթ.), առաջատար գիտաշխատողի (1965-1989թթ.), ավագ գիտաշխատողի (1985-2005թթ.) պաշտոնները:

Պարգևատրվել է մարտական և աշխատանքային մեդալներով:

Վախճանվել է 2006թ. հունիսի 5-ին Երևանում:

Գրականություն

1. ՀՀ ԳԱԱ «Գիտություն երկրի մասին տեղեկագիր»
2. 418 թղթապանակ, թանգարանի արխիվ
3. 5 ընտանեկան արխիվներ
4. Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)
5. Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան
6. http://publishing.yysu.am/files/Yengoyan_Minasyan.pdf

Հոդվածի հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Մելքոնյանին արված ավելացումների և շտկումների համար:

ԲՆԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրում հրատարակվում են Հայաստանում և արտասահմանյան երկրներում **երկրաբանության, երկրաֆիզիկայի, սելամոլոգիայի, լեռնային գործի, էկոգեոքիմիայի, ֆիզիկական աշխարհագրության** և Երկրի մասին գիտությունների այլ ասպարեզներում տարվող տեսական, փորձարարական և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզվով, տպագրության համար պատրաստ վիճակում, հրատարակման թույլտվության և ուղեկցող նամակի հետ միասին: Տեղեկագրում բոլոր հրատարակումները առանց հոնորարի են:

2. Հոդվածի ծավալը, ներառյալ պատկերները, որոնց թիվը չպետք է անցնի 3-ից, ներառյալ “ա”, “բ” և այլն, աղյուսակները, ամփոփագիրը, օգտագործված գրականության ցանկը, պետք է կազմի մոտ 12 էջ: Տեքստը անհրաժեշտ է պատրաստել Microsoft Word-ով GHEA GRAPALAT տառատեսակի օգտագործմամբ, 12 չափով և 1.5 ինտերվալով, առանց տողադարձերի: Դաշտերը պետք է լինեն. Ձախից՝ 3սմ, վերևից և ներքևից՝ 2.5 սմ և աջից՝ 1 սմ: Հոդվածը ներկայացվում է 2 օրինակով, յուրաքանչյուրը հեղինակի (հեղինակների) ստորագրությամբ և էլեկտրոնային տարբերակով, CD սկավառակի վրա:

Պատկերները, լուսանկարները և աղյուսակները, համարակալման և բացատրագրերի հետ միասին, պետք է լինեն սև-սպիտակ, A4 ֆորմատից ոչ մեծ և պարզ ընթերցելի: Պատկերների համակարգչային տարբերակները պետք է լինեն *.bmp, *.tif կամ *.pcx ֆորմատներով, 200-600 dpi ընդարձակմամբ (կետ/դյույմ):

3. Հեղինակները պետք է հետևեն ամսագրերում հոդվածների տպագրման ընդունված կարգին. հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) անվան- հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (ազգանունները), կազմակերպությունը և հասցեն, ներառյալ E-mail-ը (եթե համահեղինակները տարբեր կազմակերպություններին են, բերվում են բոլորի հասցեները՝ կապակցված աստղանիշով), հոդվածի անոտացիան (8-10 տող), հիմնաբառերը (7-9 բառ): Ապա հետևում են հոդվածի հիմնական տեքստը, **պարտադիր նշելով՝ հոդվածի տպագրման նպատակը և գիտական նորությունը**, ամփոփագիրը ռուսերեն (հայերեն) լեզվով և անոտացիան անգլերեն լեզվով:

4. Օգտագործված գրականությունը բերվում է ընդհանուր ցուցակով՝ **առանձին էջի վրա**: Հեղինակների ազգանունները գրվում են այբբենական կարգով (առաջինը՝ հոդվածի լեզվով, ապա հայերեն կամ ռուսերեն, վերջում՝ արևմտաեվրոպական լեզուներով): Տեքստում մեջբերվող հղումը բերվում է կլոր փակագծերում, հեղինակի միայն ազգանվան նշմամբ, բնօրինակի լեզվով, եթե հեղինակները երկուսից ավելի են, նշվում է առաջին համահեղինակի ազգանունը և այլն, ապա՝ հրապարակման տարին:

5. Մեջբերվող գրականության ցանկը ձևավորվում է հետևյալ կերպ. ա) գրքերի համար նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, գրքի լրիվ անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, էջերի քանակը; բ) ամսագրային հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, հոդվածի լրիվ անվանումը, ամսագրի անվանումը՝ համաձայն ընդունված հապավումների, հատորը, ամսագրի կամ թողարկման համարը, էջերը; գ) գրքերում (հավաքածուներում) զետեղված հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, հրատարակման տարեթիվը, գրքում հոդվածի լրիվ անվանումը (..... գրքում), գրքի անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, էջերը; դ) սեղմագրերի համար՝ հեղինակի ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, ատենախոսության անվանումը՝ համաձայն ընդունված հապավման (օրինակ՝ երկրաբ.-հանր.գիտ.թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), քաղաքը, կազմակերպությունը, որտեղ կայացել է պաշտպանությունը, տարեթիվը, էջերի քանակը:

6. Թվարկված պահանջներին չբավարարող հոդվածները չեն ընդունվում:

7. Սրբագրումից հետո լրացումներ չեն արվում:

8. Խմբագրության կողմից հոդվածի մերժման դեպքում հեղինակին վերադարձվում է բնագրի 1 օրինակը և խմբագրությունն իրեն է վերապահում հոդվածի մերժման պատճառների մասին բանավեճ չվարելու իրավունքը:

ПРАВИЛА ОФОРМЛЕНИЯ РУКОПИСИ

1. В журнале сер. “Науки о Земле” Известий Национальной Академии наук Республики Армения публикуются результаты теоретических, экспериментальных и прикладных исследований, проводимых в Армении и зарубежных государствах в области **геологии, геофизики, сейсмологии, горного дела, экогеохимии, физической географии** и в других направлениях наук о Земле. Статьи представляются на армянском, русском или английском языке в окончательно подготовленном виде вместе с сопроводительным письмом и разрешением на опубликование. Все публикации в журнале безгонорарные.

2. Объем статьи, вместе с иллюстрациями, число которых не должно превышать 3, включая “а”, “б” и т.д., таблицами, резюме, библиографией должен составлять около 12 страниц. Текст должен быть подготовлен в редакторе Microsoft Word с использованием шрифтов TIMES NEW ROMAN размером 12 и распечатан в интервале 1.5, без переносов с полями (слева – 3.0 см, сверху, снизу – 2.5 см, а справа – 1.0 см). Статья представляется в 2-х экземплярах распечатки, подписанных авторами, а также в электронной версии на диске CD.

Рисунки, фотографии и таблицы вместе с нумерацией и подписью должны быть черно-белыми, форматом А4 и четко выполнены. Компьютерный вариант рисунков должен быть в формате *.bmp, *.tif или *.psx с разрешением 200-600 dpi (точек на дюйм). Подписанные подписи прилагают на отдельной странице и оформляются согласно требованиям.

3. Авторам следует придерживаться общепринятой в журнале схемы статьи: название статьи, инициалы и фамилия автора (авторов), организация и адрес, включая E-mail (если соавторы из разных организаций, то приводятся адреса всех, привязанные сносками через звездочку); аннотация статьи (8-10 строк), после аннотации ключевые слова (7-9 слов), основная часть текста, **с обязательным указанием цели и научной новизны статьи**, резюме на русском (армянском) языке и аннотация на английском языке.

4. Литература приводится общим списком **на отдельной странице**. Фамилии авторов располагаются по алфавиту (вначале на языке статьи, затем армянские или русские, в конце западноевропейские). В тексте ссылка на литературу приводится в круглых скобках с указанием фамилии автора без инициалов, в оригинальной транскрипции, а если авторов более двух, то указывается фамилия первого соавтора и др., затем год издания.

5. Список цитируемой литературы оформляется следующим образом: а) для книг указывают фамилию автора (авторов) и инициалы, год издания, полное название книги, место издания, издательство, количество страниц; б) для журнальных статей – фамилия и инициалы автора (авторов), год издания, полное название статьи, название журнала согласно принятому сокращению, номер тома, номер журнала или выпуска, страницы; в) для статей в книгах (сборниках) – фамилия и инициалы автора (авторов), год издания, полное название статьи в книге (пишется В кн.: "..."), название книги, место издания, издательство, страницы; д) для авторефератов – фамилия и инициалы автора, название со ссылкой согласно принятому сокращению (Автореф.дисс. на соиск.уч.ст.канд. или доктора наук), город, организация, где состоялась защита, год, количество страниц.

6. Статьи, не отвечающие перечисленным требованиям, не принимаются.

7. Дополнения в корректуру не вносятся.

8. В случае, если статья отклонена редакцией, автору возвращается один экземпляр рукописи, и редакция оставляет за собой право не вести дискуссию по мотивам ее отклонения.

MANUSCRIPT PREPARATION GUIDELINES

1. Earth Sciences Series journal of the Proceedings of the National Academy of Sciences of the Republic of Armenia publishes results or theoretical, experimental and applied research conducted in Armenia and abroad in the field of **geology, geophysics, seismology, engineering seismology, mining, eco-geochemistry, physical geography, etc.** **Articles are submitted** in Armenian, Russian, or English as finally ready manuscripts enclosed with a cover letter and letter or authorization for publishing. All publications in the journal do not provide for any royalties.

2. Article volume, including maximum 3 illustrations with a, b, etc., tables, abstract, and list of references, shall total to about 12 pages. Texts shall be prepared in Microsoft Word editor with 12-point TIMES NEW ROMAN and printed 1.5-spaced without hyphenation. Text margins shall be set 3.0 from the left, by 2.5 cm from the bottom and top, and 1.0 cm from the right. Article manuscript shall be submitted in two printed copies signed by the authors, and as an electronic copy on CD disk.

Figures, photos and tables, numbered and with captions, shall be black-and-white in A4 format and of good quality. Electronic version of figures shall be in *.bmp, *.tif or *.pcx format with resolution of 200-600 dpi (dots per inch). Figure captions are attached on a separate page and formatted according to the requirements.

3. Authors shall adhere to the following template common for all articles in the journal: article title, initials and surname of author(-s), affiliation and address, including e-mail (if authors have different affiliations, asterisked addresses for all must be placed in the footnote), abstract (about 8-10 lines), key words (7-9 words), body text with **mandatory indication of the purpose and scientific novelty** of the article, summary in Russian (Armenian) and abstract in English.

4. References should be listed on a **separate sheet**. The authors' surnames should be given alphabetically in the origin language of the article and followed by the Armenian or Russian, and then by the West-European). All citations in the text should have references in parentheses and include author's surname without initials, in original transcription and the year of publication. In case of two and more authors, the first author's surname followed by *et al* and the year of publication should be provided.

5. List of References is formatted as follows: a) author(s)' surname(s) and initials, year of publication, complete title, place of publication, publisher and number of pages are given for books; b) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title, journal title in standard abbreviation, volume number and issue number, followed with number of pages, are given for journal articles; c) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title followed by "In: " ... book title...", place of publication, publisher and number of pages are given for articles in books (article volumes); d) author's surname and initials, title and standard abbreviation for thesis abstracts (thesis abstract for the degree of Candidate, or Doctor of Geology and Mineralogy), year, city, thesis defense institution, and number of pages.

6. Articles not meeting the listed requirements are not accepted.

7. No additions are introduced into proofs.

8. If an article is rejected by editors, one copy of manuscript is returned to the author and editors reserve the right not to enter into discussion on the reasons for such rejection.